

Թեմա 2. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ողջույն, շարունակենք ՀՀ ֆինանսական համակարգին վերաբերող տեսադասը:

Ֆինանսական համակարգի մասնավոր հատվածի մյուս մասնակիցներից քննարկենք վարկային կազմակերպություններին:

Ինչպես արդեն հեշտ կարելի է կռահել անվանումից, վարկային կազմակերպությունների հիմնական գործառույթը վարկեր տրամադրելն է: Բայց, իհարկե, դրանք իրականացնում են նաև այլ գործառնություններ, օրինակ՝ ներգրավում են փոխառություններ, ընդ որում՝ փոխառություններ կարող են ներգրավվել միայն իրավաբանական անձանցից կամ անհատ ձեռնարկատերերից: Ինչպես և առևտրային բանկերի դեպքում, բոլոր վարկային կազմակերպությունները վերահսկվում են Կենտրոնական Բանկի կողմից:

Ֆինանսական համակարգի մասնավոր հատվածի հաջորդ մասնակիցներից կարող ենք առանձնացնել ապահովագրական համակարգը:

Ապահովագրությունը մեզ պաշտպանում է վրա հասած որոշակի պատահական դեպքերի և երևույթների ծանր հետևանքներից:

Ապահովագրական համակարգը տրամադրում է տարբեր տեսակի ապահովագրական ծառայություններ, այդ թվում՝ առողջության ապահովագրությունը, գույքի ապահովագրությունը, պատասխանատվության ապահովագրությունը:

Հայաստանում ապահովագրական համակարգը բաղկացած է **ապահովագրական ընկերություններից և ապահովագրական միջնորդներից՝** բրոքերներից և գործակալներից:

Ապահովագրական ընկերությունները կազմակերպում են ապահովագրության ամբողջ գործընթացը:

Ապահովագրական գործակալները, իրենց հերթին, հանդես են գալիս ապահովագրական ընկերության անունից և ներկայացնում են վերջինիս:

Դե իսկ ապահովագրական բրոքերները ներկայացնում են ապահովագրի, այսինքն՝ ձեր շահերը, եթե դուք, օրինակ, որոշել եք ապահովագրվել: Այս դեպքում բրոքերը գործում է ձեր կողմից տրված լիազորությունների շրջանակում:

Ինչպես բանկերն ու վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները նույնպես գործում են Կենտրոնական Բանկի վերահսկողության ներքո:

Ֆինանսական համակարգի մասնավոր հատվածի մասնակիցներից է նաև **արժեթղթերի շուկան**, որը դրա մասնակիցների միջև արժեթղթերի թողարկման և շրջանառության հետ կապված տնտեսական հարաբերությունների ամբողջությունն է:

Նշանակալի մասնակից է նաև **արժույթային շուկան**: Սա դաշտ է, որտեղ գործում են ազգային և միջազգային բանկերը, բորսաները, ֆինանսական կազմակերպությունները, որոնց միջոցով իրականացվում է արտարժույթի գնումը, վաճառքը, փոխանակումը և այլ դրամական հաշվարկներ:

Ֆինանսական շուկայի մասնակիցներ են նաև **գրավատները**: Վերջիններս տրամադրում են շարժական գույքով (ոսկի, կենցաղային տեխնիկա, ավտոմեքենա և այլն) ապահովված կարճաժամկետ դրամային վարկեր:

Ֆինանսական համակարգի այլ մասնակիցներն են նաև **վճարահաշվարկային կազմակերպությունները, տարադրամի փոխանակման կետերը, դրամական փոխանցումներ կատարող վճարահաշվարկային կազմակերպությունները, ներդրումային ընկերությունները** և այլն: